«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ №135
ՀԻՄՆԱԿԱՆ ՍՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինֆորմատիկայի ուսուցչի ստեղծագործական նախաձեռնության դերը, առարկայի ուսուցման բարձրացման գործում

Առարկա՝ Ինֆորմատիկա

Ուսուցիչ՝ Երևանի Յ.Լ. Եփսիուսի անվան №88 հիմնական դպրոց
Մելանյա Առաքելյան

Վերապատրաստող՝ Լիլիթ Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆ-2022

Created by Universal Document Converter

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Ուսուցչի և սովորողների համագործակցությունը որպես ստեղծագործական նախաձեռնության և կարողությունների զարգացման միջոց……4

1.1 Ուսուցիչը նախաձեռնությունների զարգացման գործում……4

1.2 Մանկավարժի վարպետությունը կրթա-դաստիարակչական գործունեությունում……7

Գլուխ 2. Մանկավարժական հաղորդակցման պլանավորումը և պատրաստվելը դրան……12

2.1 Ուսուցչի հաղորդակցման առանձնահատկությունները……12

2.2. Մանկավարժական գործունեության ինովացիոն ուղղվածությունը……15

Եզրակացություն……17

Օգտագործված գրականության ցանկ……18

Created by Universal Document Converter

Ներածություն

Ուսուցիչը միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներին զննում է գիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Ուսուցիչը մանկավարժական գիտության կրողն է: Նրա միջոցով են իրականացվում մանկավարժության նվաճումների ներդրումները: Ուսուցչի դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր մարդու անձի զարգացման և ձևավորման համար: Ահա թե ինչու չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս կոմենսկին ասում էր. 'Արևի տակ ուսուցչի մասնագիտությունից բարձր մասնագիտություն չկա': Ուսուցիչը կրտսեր դպրոցականի, դեռահասի պատանու, երտասարդի հոգեկան աշխարհի կերտողն է:

Մանկավարժի վարպետությունը որպես դասարանի ղեկավարի արտահայտվում է նախ և առաջ սովորողների հետ նրա շփման բնագավառում: Տվյալ խնդրի կարևոր ասպեկտ համարվում է հարցը դասարանի ղեկավարի անհատական ոճի մասին:

Մանկավարժի ստեղծագործական նախաձեռնության զարգացման հիմնահարցը հանդիսանում է ոչ միայն սոցիալական, այլև ուսուցչի անձի, նրա մասնագիտացման աճի սուբյեկտիվ պահանջ: Դա ենթադրում է ուսուցչի զինումը հիմնարար գիտելիքներով, հոգեբանամակնավարժական կիրառական բնույթի կարողություններով ու հմտություններով, դրանց ծավալի ընդարձակում, ուսուցման այնպիսի ձևերի ու մեթոդների օգտագործում, որոնք կնպաստեն մանկավարժական տեխնիկայի, տեխնոլոգիայի, վարպետության տիրապետմանը, մանկավարժական գործունեության մասնագիտացման ձևավորմանը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ուսումնասիրման օբյեկտը. Ուսուցիչների մանկավարժական հաղորդակցումը երեխաների հետ:

Ուսումնասիրման առարկան. մանկավարժի անձի մասնագիտական կարևոր որակները, դերը, մանկավարժական հաղորդակցման ոճը, դրանց փոխկապակցվածությունը:

Created by Universal Document Converter

Գլուխ 1. Ուսուցչի և սովորողների համագործակցությունը որպես ստեղծագործական նախաձեռնության և կարողությունների զարգացման միջոց

1.1 Ուսուցիչը նախաձեռնությունների զարգացման գործում

Ավանդաբար համարվում է, որ մանկավարժական գործունեության հաջողությունը կախված է մանկավարժության, առարկայի իմացությունից, մեթոդիկայի տիրապետումից: Իսկ հոգեբանները վերջին տարիներին ապացուցել են, որ հաջողության մեծ մասը կախված է ուսուցչի կարողությունից՝ դասարանում ստեղծելու փոխըմբռնման, վստահության մթնոլորտ, որ նպաստում է շփմանը, զարգացմանը, ստեղծագործական հաղորդակցմանը:

Երեխաների կրթության և դաստիարակության համակարգի արդյունավետ իրականացումը ամբողջովին կախված է ուսուցչի անձից: Նախ և առաջ ուսուցիչը պետք է սիրի երեխաներին այնպես, ինչպիսին նրանք կան: Պետք է միանման սիրել և չարաճճիին, և ծույլին, և խելացիին: Բարությունը և սերը երեխաների հանդեպ՝ թույլ չեն տալիս կոպիտը վարվել նրանց հետ, չուրախանալ նրանց հաջողություններով: Երեխաները այժմ մեզ մոտ գալիս են ոչ օրդինար կերպով: Երբեմն նրանք մեզանից ավելի խելացի ենԼ: Հարկավոր է կարողանալ հասկանալ երեխաներին, այսինքն գտնվել նրանց դիրքում, ընդունել նրանց հոգսերը և գործերը՝ որպես լուրջ և հաշվի նստել նրանց հետ:

Մանկավարժական գործընթացը պետք է երեխային ուրախություն պարգևի: Դասը պետք է հարստացվի երեխաների հետաքրքրության ողջ գամմայով: Դասի ընթացքում պետք է հաճախ կիրառվեն դասի ոչ ավանդական ձևեր՝ դաս-ՈՒՀԱ, դաս-մրցույթ, դաս-քննարկում, դաս-ճամփորդություն, կոմբինացված դասեր:

Այդ դասերի ընթացքում երեխաները սովորում են աշխատել խմբերով, զույ•երով, այսինքն համագործակցել միմյանց հետ, լսել իրենց ընկերներին, և կատարել ճիշտ եզրակացություններ[1]:

Կյանքի ուրախությունը երեխան զգում է միայն այն դեպքում, երբ դասի ժամանակ իշխում է հոգևոր մոտիկությունը ուսուցչի և երեխաների միջև:

---

[1] Ռադուգինա Ա. Ա. Հոգեբանություն և մանկավարժություն: Մ., 2000թ.

Created by Universal Document Converter

‘Երեխան ամբողջական անձ է և նախ և առաջ հարկավոր է, որպեսզի մանկավարժական գործընթացը գրավի նրան ամբողջությամբ՝ նրա բոլոր կենսական ձգտումների և պահանջների հետ’:

Յուրաքանչյուր մարդ կարող է հասնել բարձր վարպետության, այդ պատճառով հարկավոր է մշտապես ձ•գտել ծնել դաստիարակվողների մեջ ստեղծագործական նախաձեռնություն: ‘:Չկան նվիրյալ և ոչ նվիրյալ, տաղանդավոր և անտաղանդ երեխաներ: Հասկանալ, բացահայտել, փայփայել յուրաքանչյուր երեխայի մեջ նրա անկրկնելի անհատական տաղանդը՝ նշանակում է բարձրացնել անձին մարդկային արժանիքի բարձր մակարդակի’-ասում է Սուխոմլինսկին:

Երեխաները ցանկանում են արտահայտել իրենց կարողությունները: Նրանք շատ են սիրում երևակայել, ստեղծագործել, պատմել, նկարել:

Դպրոցական տարիքում երեխաները մեծ մասն անց են կացնում ուսուցիչների հետ, բայց ոչ պակաս կարևոր դեր դաստիարակության խնդիրների լուծումում խաղում է ընտանիքը: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման պայմանն է: Ճիշտ է ասել Վ. Ա. Սուխոմլինսկին, որ առանց ընտանիքի, առանց ծնողների օգնության մենք չենք կարող հաղթահարել երեխաների ուսումնասիրությունը, այլ նաև մյուս բոլոր գործերը:

Դպրոցը երեխաների և մեծահասակների, աշակերտների, ուսուցիչների, ծնողների համագործակցության վայրն է: Դա համատեղ ստեղծագործական գործունեության ուրախությունն է: Եվ միայն նրանցից է կախված, թե ինչպիսին կլինի կյանքը դպրոցում: Հարկավոր է փորձել ջանալ միավորել բոլորին, որպեսզի այդ տունը լինի ամբողջական:

Ուսուցիչը միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներին զնում է գիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով:

Ուսուցիչը մանկավարժական գիտության կրողն է: Նրա միջոցով են իրականացվում մանկավարժության նվաճումների ներդրումները: Ուսուցչի դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր մարդու անձի զարգացման և ձևավորման համար: Ահա թե ինչու չեխ ականավոր մանկավարժ Յան Ամոս կոմենսկին ասում էր. ‘Արևի տակ ուսուցչի

Created by Universal Document Converter

մասնագիտությունից բարձր մասնագիտություն չկա՝: Ուսուցիչը կրտսեր դպրոցականի, դեռահասի պատանու, երտասարդի հոգեկան աշխարհի կերտողն է:

Ուսուցչի մասնագիտության ձևավորման առաջին փուլը սկսվում է այն պահից, երբ աշակերտը որոշում է ձեռք բերել ուսուցչի մասնագիտություն: Եվ միջին և աբրձր դասարաններում ուսանելու տարիներին աշակերտը ուշադիր հետևում է իր լավագույն ուսուցիչների ուսումնական գործունեության, ձգտում նրանցի սովորել ուսուցանելու, դաստիարակելու արվեստը: Աշակերտի մեջ ուսուցչի մասնագիտության ձևավորման երկորրդ փուլը սկսվում է այն պահից, երբ նա ընդունվում է մանկավարժական բուհ, ունկնդրում մանկավարժ գիտնականների, հոգեբանների, մեթոդիստների դասախոսությունները և նրանց ղեկավարությամբ մասնակցում հասարակական մանկավարժական պասիվ պրակտիկային:

Ապագա ուսուցչի մասնագիտության ձևավորման երրորդ փուլը սկբնավորվում է համապատասխան ամբիոններում, ինքնուրույնաբար ուսումնասիրում ուսումնադաստիարակչական որևէ հիմնադիր, շարադրում իր հետազոտությունները, մասնակցում գիտափորձերի, որոնք, անկասկած, նպաստում են ապագա ուսուցչի մասնագիտության ձևավորմանը:

Ապագա ուսուցչի մասնագիտության ձևավորումը, սակայն, շատ բանով պայմանավորված է դրան ձգտող անձնավորության անհատական առանձնահատկություններով: Ուսուցչի մասնագիտության չորրորդ փուլը սկսվում է դպրոցում, եևրբ նախկին ուսնողը, որպես շրջանավարտ ոտք է դնում դպրոց:

Այսպիսով, ուսուցչի մասնագիտության ձևավորման համար կարևոր դեր են խաղում կրթական կենտրոնների կողմից կազմակերպված դասընթացները, բազմահմուտ դասախոսների դասախոսություններն ու գործնական պարապմունքները[2]:

Իսկ ահա վերջին, հինգերորդ փուլում, որը տևում է երկար ու ձիգ տարիներ, ուսուցիչն անընդհատ կատարելագործվում է իր գործունեության բնօրրանում, այն դպրոցի մանկավարժական կոլեկտիվում, որի անդամն է:

---

[2] Կոլոմինսկի Յա. Լ. Սոցիալական հոգեբանություն: Ս-Պ. 1999թ.

Created by Universal Document Converter

Ուսուցչի աշխատանքը դժվար է ու բարդ: Նրա գործունեությունը ներառում է իր տքնաջան աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես նաև անձնային բարոյական բոլոր հատկանիշների դրսևորումները:

1.2 Մանկավարժի վարպետությունը կրթա-դաստիարակչական գործունեությունում

Ազգային կրթության համակարգի վերակառուցումը բարձրացնում է դպրոցի գործունեությունը նոր, առավել բարձր աստիճանի, ներկայացնում է որակապես նոր պահանջներ կրթա-դաստիարակչական պրոցեսների ղեկավարմանը դպրոցում, նրա ղեկավարներին և նրանց գործունեությանը:

Մանկավարժի վարպետությունը որպես դասարանի ղեկավարի արտահայտվում է նախ և առաջ սովորողների հետ նրա շփման բնագավառում: Հենց այդ պատճառով վերջին տարիներին ուժեղացել է մանկավարժական և հոգեբանական գիտության հետաքրքրությունը մանկավարժական շփման խնդրին, որպես փոխազդեցության բարդ բազմաասպեկտ պրոցեսի 'ուսուցիչ-աշակերտ' համակարգում: Տվյալ խնդրի կարևոր ասպեկտ համարվում է հարցը դասարանի ղեկավարի անհատական ոճի մասին:

Վերջին տարիների աշխատանքներում այդ հարցերը ենթարկվում են

հստակ ուսումնասիրման: Օրինակ, 'Ուսուցչի գործունեության անհատական ոճ. դիագնոստիկա և ձևավորում: Մեթոդական հրահանգներ' աշխատությունում ուսումնասիրվում են հարցեր, կապված երիտասարդ մանկավարժների գործունեության անհատական ոճի ձևավորման մեթոդիկայի հետ. բնութագրվում են թեորետիկ մոտեցումները անհատական ոճի դիագնոստիկային և զարգացմանը, նկատվում է անհատական ոճի ազդեցությունը ուսուցչի արվեստին, ինչպես նաև տրվում է անհատական ոճի զարգացման ծրագիր:

Հենց այդ նույն խնդրին հպվում է Օ. Ա. Սլեպիչեվան: 'Գործունեության անհատական ոճի ձևավորումը ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստման այմաններից մեկն է':

Created by Universal Document Converter

Մինչդեռ այդ բոլոր աշխատանքների առանձնահատկություն համարվում է անհատական ոճի ձևավորման խնդրի մշակումը մանկավարժի ընդհանուր գործունեության կոնտեքստում:

Դրա հետ կապված ակտուալ համարվում է աշխատանքի նպատակի ներկայացումը որպես անհատական ոճի ձևավորման գործոնների ուսումնասիրում դասարանային ղեկավարությունում:

Նրա մասնագիտական աճի ղեկավարումը, անձնական ստեղծագործական անհատականության ձևավորումը դասարանի ղեկավարությունում, ունի մեծ նշանակություն մանկավարժական կոլեկտիվի համար, քանի որ դա ստեղծում է նախադրյալներ նրա բոլոր անդամների միավորմանը, միակ մանկավարժական պլատֆորմի ստեղծմանը, մանկավարժների ստեղծագործական պոտենցիալի բարձրացմանը, սովորողների զարգացմանը:

Աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ երիտասարդ ուսուցիչները ոչ հազվադեպ կիրառում են դիստանցիա շփման մեջ, համարելով, որ դա օգնում է նրանց ներկայացնել իրենց որպես դասարանի ղեկավարի: Մինչդեռ մեծամասամբ դա հանգեցնում է մանկավարժական անհաջողություններին, սոցիալ-հոգեբանական փոխազդեցության համակարգի ձևավորման, չի նպաստում ճշմարիտ ստեղծագործական մթնոլորտի ստեղծմանը:

Մանկավարժի կողմից շփման անհատական ոճի ձեռքբերումը բարդ պրոցես է, սեղմ կապված ստեղծագործական, մանկավարժական անհատականության ձևավորման հետ:

Անհատական ոճը հասկացվում է որպես մանկավարժական հաղորդակցման ամբողջական համակարգ, որ ապահովում է ուսուցչի արդյունավետ փոխազդեցությունը սովորողների հետ և սահմանում նպատակներով, մանկավարժական գործունեության խնդիրներով և մանկավարժի անհատականության տարբեր մակարդակների հատկություններով:

Անհատական ոճի օպերացիաների համակարգը կախված է ինտեգրալային անհատականության բազմամակարդակ հատկություններց: Ի դեպ մանկավարժական հաղորդակցման և բազմամակարդակ անհատական հատկությունների միջև գոյություն ունի բազմանշանակ կախվածություն:

Created by Universal Document Converter

Դասարանի ղեկավարի անհատական ոճում օպերացիաների միջև, կախված անհատականության միևնույն հատկություններից, առկա են ստատիստիկորեն նշանակալի կապեր, ինչն էլ պայմանավորում է օպերացիաների համակարգի ամբողջականությունը:

Դասարանի ղեկավարի անհատական ոճերի համակարգին բնորոշ է անսահմանության լայն զոնան: Դա նշանակում է, որ միևնույն մանկավարժական նպատակի ձեռքբերումը, միևնույն միջանձնական հարաբերությունների ստեղծումը հնարավոր է մանկավարժական հաղորդակցման տարբեր օպերացիաների օգնությամբ[3]:

Անհատական ոճի օպերացիաների համակարգին բնորոշ են կոմպենսատորային ֆունկցիաները:

Ըստ մի շարք հետազոտությունների, միջանձնական շփման բնույթը զգալիորեն պայմանավորված է սուբյեկտի խառնվածքից: Այսպես, էքստրատարբերակը ցուցաբերում է ազդեցություն շփման նախաձեռնությանը, սոցիալական շփումների հաստատման լայնությանը և թեթևությանը, զգացմունքայնությունը կարող է ազդել աշակերտների հետ ուսուցչի շփման հնչերանգին, շփման դիստանցիային, էմոցիոնալ կենտրոնացման արագությանը այս կամ այն գործողություններին և սովորողների արարքներին:

Միևնույն ժամանակ մանկավարժական գործունեության հաջողության բազմաթիվ գործոնների միջև կարևոր դեր պատկանում է դասարանի ղեկավարի հատկություններին: Ն. Վ. Կուզմինի և Ա. Ի. Շչերբակովի հետազոտություններում վստահաբար պայմանավորված է մանկավարժական գործունեության բարձր մակարդակի անհրաժեշտությունը պրոֆեսիոնալ-մանկավարժական գործունեության հաջող իրականացման համար: Հաստատված է նաև, որ ուսուցչի դրական մոտեցումը սովորողներին բարենպաստ է անդրադառնում նաև աշակերտների հետ շփման բազմակողմանիությանը: Եվ ընդհակառակը, ավտորիտար-գերակշռող սկզբունքների արտահայտումը բարդացնում է ուսուցչի շփումը սովորողների հետ և սովորողների շփումը իրենց միջև:

---

[3] Ի. Պ. Պոդլասի. Մանկավարժություն: Մ., 1999թ.

Created by Universal Document Converter

Դասարանի ղեկավարի անհատական ոճը ձևավորվում է ուսուցչի կողմից հաղորդակցական օպերացիաների անհատական ընտրության հիմքում: Ընտրությունը, կատարված մանկավարժի անհատականության գործունեության և հատկությունների պահանջների հետ, նրա մոտ առաջացնում է բավարարվածության էմոցիոնալ վիճակ, և, ընդհակառակը, եթե նա հակասում է անհատական հատկություններին, առաջանում է էմոցիոնալ անհարմարավետության հակադիր վիճակ: Այդ կերպ, էմոցիոնալ վիճակը կառավարում է ընտրության պրոցեսը: Դրա հետ կապված օգնությունը մանկավարժական շփման անհատական ոճի ձևավորումում պետք է ուղղված լինի հիմնականում ուսուցչի ինքնագիտակցմանը և մասնա•իտական ինքնադաստիարակությանը:

Անհատականության զարգացումը և նրա հարմոնիզացիան մանկավարժական շփման անհատական ոճի շնորհիվ՝ համարվում է մանկավարժական վարպետության ձևավորման որոշիչ գործոն:

Տարբեր ժամանակներ հայրենական գիտությունում ուսումնասիրվել են ոճային խնդիրների տարբեր ասպեկտներ՝ մանկավարժի ոճի բովանդակային բնութագրիչներ, ոճի ձևավորման մեթոդաբանական և թեորետիկ հիմունքներ, ոճի դիագնոստիկայի գործնական հնարավորություն և մանկավարժի անհատական ոճի զարգացման պայմաններ: Ժամանակակից մանկավարժական պրակտիկան, կենտրոնացած նախաձեռնողական մոտեցմանը, ներկայացնում է բավական նոր պահանջներ մանկավարժի պատրաստմանը և գործունեությանը: Դրա հետ կապված մանկավարժի անհատական ոճի զարգացման և ձևավորման պրոցեսի կառավարման հնարավորությունների որոնումը պայմանավորված է հույսով՝ հաջող մասնագիտական հաստատմանը, ինքնաիրականացմանը և մանկավարժի անձի ինքնաակտուալացմանը[4]:

Ուսուցիչը չպետք է բացահայտ ձևավորի մանկավարժական դիրք: Երեխաների համար մանկավարժի բառերը և արարքները պետք է ընդունվեն որպես իր սեփական համոզմունքների արտահայտում, այլ ոչ միայն պարտքի

[4] Ուսուցչի գործունեության անհատական ոճը. դիագնոստիկա և ձևավորում: Յար., 1995թ.:

Created by Universal Document Converter

կատարում: Մանկավարժի անկեղծությունը՝ պարզ շփումների պարգևն է դաստիարակվողների հետ:

Մանկավարժորեն նպատակաուղղված մոտեցումները կառուցվում են ուսուցչի և աշակերտի փոխհարգանքում: Հարկավոր է հարգել յուրաքանչյուր աշակերտի անհատականությունը, ստեղծել պայմաններ նրա ինքնապնդման համար՝ հասակակիցների աչքերում, պահպանել անձի դրական գծերի զարգացումը: Եթե մանկավարժը հետևի այդ խորհուրդներին, ապա կկանխի շատ խնդիրները և դժվարությունները հաղորդակցման ընթացքում:

Բազմաթիվ հետազոտությունների և փորձարկումների արդյունքում հոգեբանները և մանկավարժները ուսուցիչներին առաջարկում են հետևյալ միջոցները՝ հաղորդակցական կարողությունների զարգացման համար.

1. Հարկավոր է գիտակցել, որ դպրոցը հաղորդակցման մի մասն է, իսկ մանկավարժի մոտեցումը երեխաներին՝ հասարակական պահանջների արտահայտումն է:

2. Ուսուցիչը չպետք է բացահայտ ձևավորի մանկավարժական դիրք: Երեխաների համար մանկավարժի բառերը և արարքները պետք է ընդունվեն որպես նրա սեփական համոզմունքների արտահայտում, այլ ոչ պարզապես պարտքի կատարումը: Մանկավարժի անկեղծությունը՝ պարզ կոնտակտների հաստատումն է դաստիարակվողների հետ:

3. Սեփական անձի ադեկվատ գնահատականը: Իր գիտակցումը, ինքն իրեն կառավարումը պետք է դառնա մշտական հոգս յուրաքանչյուր ուսուցչի համար: Հատուկ ուշադրություն պահանջում է կարողությունը կառավարել սեփական էմոցիոնալ վիճակը. դաստիարակչական պրոցեսին վնասում է դողացող ձայնը, բացասական էմոցիաների, բղավոցի գերիշխումը:

4. Մանկավարժորեն նպատակաուղղված մոտեցումները կառուցվում են ուսուցչի և աշակերտի փոխհարգանքի միջոցով: Հարկավոր է հար•ել յուրաքանչյուր դպրոցականի անհատականությունը, ստեղծել պայմաններ նրա ինքնահամոզմանը հասակակիցների աչքերում, նպաստել անձի դրական գծերի զարգացմանը:

Created by Universal Document Converter

Գլուխ 2. Մանկավարժական հաղորդակցման պլանավորումը և պատրաստվելը դրան

2.1 Ուսուցչի հաղորդակցման առանձնահատկությունները

Ուսուցչի հաղորդակցման առանձնահատկություն է համարվում նրա ուղղվածությունը, մոտեցումը աշակերտներին: Հետևողական մանկավարժը միշտ կառուցում է իր խոսքը ռեակցիաների հիմքում: Նա կարող է նախապես պատկերացնել, թե ինչպես է դրսևորում ուշադրությունը աշակերտը նրա բառերին, ինչ գնահատական կգտնի նման մոտեցումը, կօգնի մանկավարժի առավել ռացիոնալ կերպով կազմակերպել սեփական խոսքը, դասավորել այն հաղորդակցման ընթացքում:

Ուսուցչի բանավոր խոսքը, որպես կանոն, իմպրովիզացիայի խոսքն է: Դրանում ևս կայանում է նրա առանձնահատկությունը: Մանկավարժ-պրոֆեսիոնալը մշտապես խոսում է առանց անմիջական հենարանի: Աշակերտները, լսելով նրան, ասես ներկա են բառերի, արտահայտությունների ներկայիս ծննդի պահին: Ստեղծվում է տպավորություն, որ ուսուցիչը հանրորեն մտածում է, առաջին անգամ աշակերտների հետ միասին պարզում է ճշմարտությունը:

Իմպրովիզացված խոսքը անմիանշանակ հասկացություն է: Որոշ դեպքերում դա խոսքն է, նախապես մտածված, բայց խելացիորեն մատուցված ուսուցչի կողմից որպես 'նոր ծնված': Դա իրոք ազատ շարադրումն է, ստեղծված արտասանության պահին, բայց որոշակի պատրաստվածության հաշվարկմամբ:

Մնացած դեպքերում ուսուցչի խոսքը իմպրովիզացիա է այդ բառի ուղիղ առումով, հանպատրաստի խոսք, որ ծնվում է, երբ պայմանները պահանջում են ուսուցչի անհապաղ ռեակցիա: Հենց այստեղ է արտահայտվում ուսուցչի ընդհանուր և մանկավարժական կուլտուրան, աշակերտների հետ նրա փոխհարաբերությունների փորձը:

Մանկավարժական հաղորդակցումը ուսուցման և դաստիարակության ընթացքում ծառայում է որպես ազդեցության միջոց սովորողի անձին: Մանկավարժական հաղորդակացումը մանկավարժի և դաստիարակվողների սոցիալ-հոգեբանական ազդեցության ամբողջական համակարգն է: Բացի

Created by Universal Document Converter

սովորական ֆունկցիաներից, մանկավարժական հաղորդակցության առանձնահատկությունը ծնում է սոցիալ-հոգեբանական ապահովման ևս մեկ ֆունկցիա, մանկավարժի՝ աշակերտների հետ փոխահարաբերությունների կազմակերպչական ֆունկցիա, և ներկայանում որպես ուսումնական խնդիրների լուծման միջոց:

Առավել բարդ խնդիրների շարքում, որ ներկայանում են մանկավարժի առջև, ընդ•րկված է պրոդուկտիվ հաղորդակցման կազմակերպումը, որ ենթադրում է հաղորդակցական կարողությունների զարգացման բարձր մակարդակի քանակը: Եվ շատ օ•տակար է այնպես կազմակերպել երեխաների հետ շփումը, որպեսզի այդ անկրկնելի պրոցեսը կայանա: Բավական կարևոր դեր այստեղ խաղում է հաղորդակցման ոճը:

Մանկավարժական հաղորդակցման պրոցեսում ուսուցիչը ուղիղ կամ փոխաբերական կերպով պետք է իրականացնի իր սոցիալ-դերային և ֆունկցիոնալ պարտականությունները: Հաղորդակացման և ղեկավարման ոճը որոշակիորեն սահմանում են կրթության և դաստիարակության արդյունավետությունը, ինչպես նաև անձի զարգացման առանձնահատկությունները և ուսումնական խմբում միջանձնական հարաբերությունների ձևավորումները[5]:

Դասի ընթացքում մանկավարժին հարկավոր է տնօրինել ողջ մանկավարժական պրոցեսի հաղորդակցական կառուցվածքը, լինել առավելագույնս զգոն փոքրագույն փոփոխություններին, մշտապես համեմատել ընտրված մեթոդները տվյալ փուլում հաղորդակցման առանձնահատկությունների հետ:

Առավել բարենպաստ պրոցես դաստիարակության և կրթության ընթացքում ապահովվում է հենց փոխհարաբերությունների արդյունավետ կառուցված համակարգով: Նման համակարգը պետք է բնորոշվի.

-տեսանելիության և համագործակցության գործոնների փոխազդեցությամբ՝ կրթական պրոցեսի կազմակերպման դեպքում,

---

[5] Օբուխովա Լ. Ֆ. Տարիքային հոգեբանություն: Մ. 1996թ.:

Created by Universal Document Converter

-դպրոցականների մոտ հոգեբանական առանձնահատկությունների քանակությամբ՝ մանկավարժների հետ,

-կողմնորոշումը մեծահասակին՝ բարձր ինքնագնահատականով, ինքնագիտակցմամբ:

-կրթական ազդեցության ավտորիտար ձևերի բացակայությամբ,

-որպես կառավարման գործոն դաստիարակության կիրառումը և ուսուցումը,

-սովորողների ընդգրկումը մանկավարժական հաղորդակցման նպատակաուղղված կազմակերպված համակարգին, այդ թվում գործունեության բազմազան ձևերի միջոցով (կոնֆերենցիա և այլն):

Սեփական մանկավարժական ոճի գիտակցական ձևավորումը հնարավոր է կարողության զարգացման որոշակի մակարդակի դեպքում՝ մասնագիտական գործունեության ինքնաանալիզին:

Մանկավարժները տվյալ դեպքում երեխաների հետ մասնագիտական փոխազդեցության ժամանակ նպատակաուղղված կերպով որոնում են, ընտրում, կուտակում հաղորդակցման միջոցներ և կարողություններ, որոնք ապահովում են օպտիմալ արդյունավետություն երեխաների հետ փոխազդեցությունում և համապատասխանում նրանց անհատականությանը: Դա իր հերթին հանգեցնում է էմոցիոնալ բավարարվածության, հոգեբանական հարմարավետության անհանգստության:

Աստիճանաբար կատարվում է հաղորդակցական գործունեության իրականացման միջոցների և հնարավորությունների կայունացում, դասավորվում է որոշակի կայուն ամբողջական կառուցվածք, իսկ առավել հստակ՝ մանկավարժական հաղորդակցման անհատական ոճը: Ոճի տարերային մշակման ընթացքում մանկավարժը նաև կիրառում է հաղորդակցման հայտնի միջոցներ և կարողություններ, որոնք թվում են առավել արդյունավետ, անհատապես հարմար:

Created by Universal Document Converter

2.2. Մանկավարժական գործունեության ինովացիոն ուղղվածությունը

Նորամուծությունները կամ ինովացիաները բնորոշ են մարդու յուրաքանչյուր մասնագիտական գործունեության համար և այդ պատճառով դառնում են ուսումնասիրման, անալիզի և ներդրման առարկա: Ինովացիաները ինքնստինքյան չեն առաջանում, նրանք հայտնվում են գիտական որոնումների, առանձին ուսուցիչների և ամբողջական կոլեկտիվների մանկավարժական փորձի արդյունքում: Այդ պրոցեսը չի կարող լինել տարերային, այն կառավարման կարիք ունի:

Ամբողջական մանկավարժական պրոցեսի ինովացիոն ստրատե•իայի կոնտեքստում էականորեն աճում է դպրոցի դիրեկտորի, ուսուցիչների և դաստիարակների դերը՝ որպես նորարարական պրոցեսների անմիջական կրողներ: Ուսուցման տեխնոլոգիաների ողջ բազմազանության դեպքում՝ դիդակտիկ, համակարգչային, մոդուլային և այլն՝ հիմնական մանկավարժական ֆունկցիաների իրականացումը ներկայացված է ուսուցիչներին:

Ինովացիոն պրոցեսների էության ըմբռնումում գտնվում են մանկավարժության երկու կարևորագույն խնդիրներ՝ ուսումնասիրման, ընդհանրացման խնդիրը և հոգեբանա-մանկավարժական գիտության ձեռքբերումների ներդրման խնդիրը պրակտիկայում:

Խոսքը, հետևաբար այն մասին է, որ ուսուցիչը կարող է ներկայանալ որպես հեղինակ, հետազոտող, նոր մանկավարժական տեխնոլոգիաների, թեորեմների կիրառող: Այդ պրոցեսի կառավարումը ապահովում է նպատակաուղղված հավաք, նոր գաղափարներ, մեթոդներ: Մանկավարժական գործունեության ինովացիոն ուղղվածության անհրաժեշտությունը հանրության, մշակույթի և կրթության զարգացման ժամանակակից պայմաններում սահմանվում է մի շարք պայմաններով:

Առաջին հերթին, կատարվող սոցիալ-տնտեսական ձևավորումները պայմանավորել են կրթական համակարգի, մեթոդաբանության արմատական նորացման անհրաժեշտությունը[6]:

---

[6] Մարկովա Ա. Կ. Նիկոնովա Ա. Յա. Ուսուցի գործունեության անհատական ոճի հոգեբանական առանձնահատկությունները: 1987թ.

Created by Universal Document Converter

Երկրորդ հերթին, կրթության բովանդակության հումանիզացման ուժեղացումը, նոր ուսումնական առարկաների ներմուծումը պահանջում են նոր կազմակերպչական ձևերի, ուսուցման տեխնոլոգիաների մշտական որոնումներ:

Այստեղ էականորեն աճում է մանկավարժական գիտելիքի դերը և հեղինակությունը ուսուցչական միջավայրում:

Երրորդ հերթին, ուսուցիչների մոտեցման բնույթի փոփոխությունը մանկավարժական նորարարությունների կիրառման և փաստերի յուրացմանը:

Այսպիսով, ժամանակակից դպրոցի կողմից կուտակվել է հարուստ մանկավարժական փորձ, որ պետք է իրականացվի կոնկրետ մանկավարժական գործունեությունում, բայց հաճախ մնում է անպահանջ, քանի որ ուսուցիչների ու ղեկավարների մեծամասնությունը ձևավորված չեն նրա ուսումնասիրման և կիրառման պահանջին: Իրական պրակտիկայում ուսուցիչները հաճախ չեն մտածում սեփական մանկավարժական փորձի անալիզի անհրաժեշտությանը և նպատակաուղղվածությանը:

Ինովացիոն ուղղվածության ձևավորումը ենթադրում է որոշակի կրիտերիաներ կիրառում, որ թույլ են տալիս դատել այս կամ այն նորարարության արդյունավետության մասին: Ուշադրություն դարձնելով մանկավարժական հետազոտությունների փորձը, կարելի է կատարել մանկավարժական նորարարությունների կրիտերիաների հետևյալ միակցությունը՝ նորամուծություն, օպտիմալություն, բարձր արդյունավետություն, ստեղծագործական նախաձեռնության կիրառման հնարավորություն զանգվածային փորձում:

Մանկավարժության վարպետության կառուցվածքի բաղադրիչներն են.

1. Մանկավարժական տակտը
2. Մանկավարժական հաղորդակցումը
3. Մանկավարժական տեխնիկան և տեխնոլոգիաները
4. Ուսուցչի անձնային և մասնագիտական հատկանիշների ամբողջական համակար•ը
5. Մանկավարժական խնդիրների լուծումը պրոֆեսիոնալ մակարդակով
6. Հուզական ներգործությունների կազմակերպման կարողությունը:

Created by Universal Document Converter

Եզրակացություն

Այսպիսով, ինչպես հետազոտության ժամանակ պարզեցինք, ուսուցիչը մանկավարժական գիտության կրողն է: Նրա միջոցով են իրականացվում մանկավարժության նվաճումների ներդրումները: Ուսուցչի դերն անգնահատելի է մարդկային հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր մարդու անձի զարգացման և ձևավորման համար: Ուսուցիչը կրտսեր դպրոցականի, դեռահասի պատանու, երիտասարդի հոգեկան աշխարհի կերտողն է:

Մանկավարժի վարպետությունը որպես դասարանի ղեկավարի արտահայտվում է նախ և առաջ սովորողների հետ նրա շփման բնագավառում: Հենց այդ պատճառով վերջին տարիներին ուժեղացել է մանկավարժական և հոգեբանական գիտության հետաքրքրությունը մանկավարժական շփման խնդրին, որպես փոխազդեցության բարդ բազմասպեկտ պրոցեսի 'ուսուցիչ-աշակերտ' համակարգում: Տվյալ խնդրի կարևոր ասպեկտ համարվում է հարցը դասարանի ղեկավարի անհատական ոճի մասին:

Ստեղծագործական կիրառման հնարավորությունը ուսումնասիրվում է որպես մանկավարժական նորարարությունների գնահատականի կրիտերիա: Իրականում եթե արժեքավոր մանկավարժական գաղափարը կամ տեխնոլոգիան մնում է սահմանափակ կիրառման շրջանակներում, պայմանավորված ուսուցչի գործունեության առանձնահատկությամբ, ապա հազիվ թե տվյալ դեպքում մենք կարողանանք խոսել մանկավարժական նորարարության մասին: Վերոհիշյալ կրիտերիաների իմացությունը և կարողությունը կիրառել դրանք մանկավարժական ինովացիաների գնահատականի դեպքում՝ ստեղծում են հիմք մանկավարժական ստեղծագործության համար:

Ավանդաբար համարվում է, որ մանկավարժական գործունեության հաջողությունը կախված է մանկավարժության, առարկայի իմացությունից, մեթոդիկայի տիրապետումից: Իսկ հոգեբանները վերջին տարիներին ապացուցել են, որ հաջողության մեծ մասը կախված է ուսուցչի կարողությունից՝ դասարանում ստեղծելու փոխըմբռնման, վստահության մթնոլորտ, որ նպաստում է շփմանը, զարգացմանը, ստեղծագործական հաղորդակցմանը:

Created by Universal Document Converter

Օգտագործված գրականության ցանկ

1. Ի. Պ. Պոդլասի. Մանկավարժություն: Մ., 1999թ.
2. Կոլոմինսկի Յա. Լ. Սոցիալական հոգեբանություն: Ս-Պ. 1999թ.
3. Ռադուգինա Ա. Ա. Հոգեբանություն և մանկավարժություն: Մ., 2000թ.:
4. Մարկովա Ա. Կ. Նիկոնովա Ա. Յա. Ուսուցի գործունեության անհատական ոճի հոգեբանական առանձնահատկությունները: 1987թ.:
5. Օբուխովա Լ. Ֆ. Տարիքային հոգեբանություն: Մ. 1996թ.:
6. Ուսուցչի գործունեության անհատական ոճը. դիագնոստիկա և ձևավորում: Յար., 1995թ.:
7. www.referat.ru
8. www.bestreferat.ru

Created by Universal Document Converter